

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
13 մայիսի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ապրիլի 2006 թվականի N 572-Ն

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Սահմանել`

ա) քրեակատարողական ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները` համաձայն N 1 հավելվածի.

բ) քրեակատարողական ծառայողին ներկայացվող առողջական վիճակի հետ կապված պահանջները` համաձայն N 2 հավելվածի.

գ) որ քրեակատարողական ծառայությունում ծառայության մեջ գտնվող և զենք կրող քրեակատարողական ծառայողների վրա տարածվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 2-ի «Զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկը հաստատելու մասին» N 489 որոշման գործողությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի
Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2006 թ. մայիսի 6
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2006 թվականի
ապրիլի 13-ի N 572-Ն որոշման

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

NN ը/կ	Ծառայության բնույթը	Մասնագիտությունը
1.	Ֆինանսական, հաշվապահական հաշվառման աշխատանքներ	տնտեսագիտություն, տեսական տնտեսագիտություն, աշխատանքի տնտեսագիտություն և սոցիոլոգիա, հաշվապահական հաշվառում և աուդիտ, ֆինանսներ և վարկ, համաշխարհային տնտեսագիտություն, ազգային տնտեսագիտություն, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, ապրանքագիտություն, շուկայաբանություն
2.	Կենցաղային ապահովում	քաղաքային շինարարություն և տնտեսություն, արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն, ջրամատակարարում և ջրահեռացում, էլեկտրամատակարարում, էլեկտրաէներգետիկական համակարգեր և ցանցեր, էլեկտրամեխանիկա, ճարտարապետություն, շենքերի նախագծում, տնտեսագիտություն, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, էլեկտրակայաններ, կիրառական գեոդեզիա, քաղաքային կադաստր, անշարժ գույքի փորձաքննություն և կառավարում, մեքենաշինության տեխնոլոգիա
3.	Պետական գնումներ	իրավագիտություն, տնտեսագիտություն, աշխատանքի տնտեսագիտություն և սոցիոլոգիա, ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձագիտություն, շուկայաբանություն, առևտուր, ստանդարտացում և սերտիֆիկացում, բիզնեսի կազմակերպում, կառավարում
4.	Կալանավորվածների և դատապարտյալների հաշվառում	իրավագիտություն
5.	Իրավական, միջազգային հարաբերություններ, կազմվերլուծական աշխատանքներ	իրավագիտություն, միջազգային հարաբերություններ, օտար լեզուներ
6.	Բժշկական սպասարկում	բուժական գործ, բժշկական խարգելման գործ, ստոմատոլոգիա, դեղագործություն,

		բուժական գործ՝ զինված ուժերում
7.	Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ (միայն գլխավոր մասնագետներ)	իրավագիտություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, սոցիալական աշխատանք, փիլիսոփայություն, պատմաբանություն, սոցիալական մանկավարժություն
8.	Այլընտրանքային պատիժների կատարում	իրավագիտություն, սոցիալական աշխատանք
9.	Սույն ցանկի 1-8 կետերում չընդգրկված բնույթի ծառայություններ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ մասնագիտություն

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

[Հավելված N 2](#)
[ՀՀ կառավարության 2006 թվականի
ապրիլի 13-ի N 572-Ն որոշման](#)

**ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

(Հավելվածը փոփ. 01.12.11 [N 1691-Ն](#))

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան